Известия НАН РА. Науки о Земле, 2008, LXI, № 3, 60

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԲՈՐԻՍ ՄԱՆՈՒԿԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)

16 տարի առաջ կյանքից հեռացավ միներալոգիայի, երկրաքիմիայի և պետրալոգիայի բնագավառներում ճանաչված մասնագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի իզոտոպային երկրաբանության լաբորատորիայի վարիչ, գիտության բնագավառում ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Բորիս Մանուկի Մելիքսեթյանը:

2008թ. դեկտեմբերին կբոլորեր նրա 80 տարին: Բ.Մելիքսեթյանը ծնվել է 09.12.1928թ. Թբիլիսիում: 1944թ. ընտանիքով տեղափոխվել և բնակություն է հաստատել Երևանում:

1955թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետը, ընդունվել է ԵԳԻ ասպիրանտուրա «Պետրոգրաֆիա, միներալոգիա» մասնագիտությամբ: Ասպիրանտից մինչև առաջատար գիտաշխատող և լաբորատորիայի վարիչ նրա մոտ քառասունամյա գործունեությունը ունեցել է գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ:

Նշանավոր պետրոգրաֆ և միներոլոգ, ակադեմիկոս Վ.Ս.Սոբոլևի և պրոֆեսոր Վ.Վ. Լյախովիչի ղեկավարությամբ ասպիրանտական ուսումնառության տարիներին ստացած հիմնավոր գիտելիքները Բ.Մելիքսեթյանը հաջողությամբ զարգացնում էր հետագա գործունեության ընթացքում:

Նա առաջիններից էր, ով Հայաստանի տարածքի տարբեր մագմատիկ կոմպլեքսների միներալոգիային, երկրաքիմիային և ակցեսոր միներալներին, ինչպես նաև հազվագյուտ և մետաղածին տարրերին նվիրված ուսումնասիրությունները բարձրացրեց գիտական նոր մակարդակի: Մեղրու խոշոր ինտրուզիվ զանգվածներ կազմող ապարներին նվիրված աշխատանքները Բ.Մելիքսեթյանին լայն ճանաչում բերեցին Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Արդյունքները ամփոփվեցին թեկնածուական ատենախոսության մեջ, որը 1961թ. փայլուն կերպով պաշտպանվեց Մոսկվայի Պետական համալսարանում:

1964–70թթ. Բ.Մելիքսեթյանի հետազոտությունները նվիրված էին Թեժսարի ալկալային հրաբխա-ինտրուզիվ կոմպլեքսի և Կենտրոնական Հայաստանի պորֆիրանման գրանիտոիդային ապարների միներալոգիայի, երկրաքիմիայի, ինչպես նաև նրանց հանքառաջացման հարցերին: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին «Թեժսարի ալկալային կոմպլեքսի միներալոգիան, երկրաքիմիան և պետրալոգիական առանձնահատկությունները» (1964թ.) և «Կենտրոնական Հայաստանի պորֆիրանման գրանիտոիդային ինտրուզիվների պետրալոգիան, միներալոգիան և երկրաքիմիան» (1970թ.) մենագրություններում:

70-ական թվականների վերջերին Բ.Մելիքսեթյանի ղեկավարությամբ իրականացված Հայաստանի տարածքի հազվագյուտ մետաղային հումքի երկրաբանա-որոնողական հետազոտությունները հիմք հանդիսացան այդ աշխատանքների նոր փուլերի նախաձեռնմանը: Այդ աշխատանքները թույլ տվեցին նաև հիմնավորել Հարավային Կովկասի տեկտոնամագմատիկ զարգացման և հանքայնացման տեղաբաշխման նոր մոտեցումները:

Գործունեության հետագա տարիներին Բ.Մելիքսեթյանի մասնակցությամբ մշակվում էր Հայաստանի տարածքի մագմատիկ կոմպլեքսների ֆորմացիոն վերլուծության ավելի ընդհանուր հարցերը, որոնք դիտարկվում են կապված երկրակեղևի առաջընթաց զարգացման մեզո-կայնոզոյան պատմության ընթացքում երկրադինամիկական իրադրությունների փոփոխման հետ:

Բ.Մելիքսեթյանի «Փոքր Կովկասի պալեոգեն-նեոգենյան հրաբխա-ինտրուզիվ ֆորմացիաների պետրալոգիան, երկրաքիմիան և հանքաբերությունը (հպման գոտիների մագմատիզմ)» մեծածավալ աշխատությունը 1989թ.-ին Թբիլիսիում ներկայացվեց որպես դոկտորական ատենախոսություն:

Բ.Մելիքսեթյանի աշխատանքները հիմնված էին տարաբնույթ անալիտիկ տվյալների և մեծ ծավալի գիտական գրականության վերլուծության վրա: Դա թույլ տվեց նրան բացահայտել Ալպ-Հիմալայան գոտու Կովկասյան հատվածի սահմաններում կայնոզոյան մագմատիզմի զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

Բ.Մելիքսեթյանը հեղինակ է շուրջ 110 գիտական հոդվածների և մի շարք մենագրությունների, որոնք մինչ այսօր չեն կորցրել իրենց գիտական արդիականությունը: 1976թ. Բ.Մելիքսեթյանը «Հազվագյուտ և ազնիվ տարրերը Հայկական ՍՍՀ հանքային ֆորմացիաներում» խմբային մենագրության համար արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի: Նա ճանաչված գիտնական էր, վայելում էր մեծ հեղինակություն երկրաբանների միջավայրում ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նրա հետ երկար տարիներ համագործակցել են նախկին ԽՍՀՄ-ի խոշոր գիտական կենտրոնների այնպիսի ճանաչված գիտնականներ, ինչպիսիք են Դ.Կորժինսկին, Վ.Կոպտև-Դվորնիկովը, Լ.Տաուսոնը, Վ.Լյախովիչը, Մ.Ֆավորսկայան և ուր.:

Բ.Մելիքսեթյանի ողջ կյանքը և բազմամյա գործունեությունը նշագրված էր ընկերների նկատմամբ ջերմ և բարյացկամ վերաբերմունքով և նոր գաղափարներով երիտասարդների հետ առատորեն կիսվելու պատրաստակամությամբ:

Նրան բնորոշ էր համեստ պահվածքը և աշխատանքային կոլեկտիվում, և ընտանիքում, և հատկապես դաշտային արշավախմբային պայմաններում: Տարիները չեն ստվերել բարի հիշողությունները նրան ճանաչող ընկերների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Տեղեկագրի «Գիտություններ երկրի մասին» հանդեսի խմբագրություն